ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1247-Ն

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆ ՉԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԿԱՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՌԵԵՍՏՐԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

«Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 289-րդ հոդվածի 5-րդ մասին և 293-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրավաբանական անձին հանելու կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին չընդգրկելու համար հիմք հանդիսացող իրավախախտումների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վկայականի գործողությունը կասեցնելու համար հիմք հանդիսացող իրավախախտումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ իրավաբանական անձը հանվում է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից կամ իրավաբանական անձը չի ընդգրկվում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վկայականի գործողությունը կասեցվում է, եթե սույն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 2-րդ հավելվածի 1-ին և 2-րդ կետերով և 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված և սույն կետում նախատեսված ժամկետում կատարված բոլոր իրավախախտումների արդյունքում հաշվարկված կամ լրացուցիչ առաջադրված պարտավորությունների հանրագումարը գերազանցում է՝

1) իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում չընդգրկման որոշման կայացման համար՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձի ընդգրկման համար դիմումը ներկայացնելու օրվան նախորդող տասներկու ավարտված ամիսների համար արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձի կողմից ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված ավելացված արժեքի հարկով հարկման բազայի 0,8 %-ը.

2) իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից հանելու կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշման կայացման համար՝ իրավախախտումների արձանագրման օրվան նախորդող տասներկու ավարտված ամիսների համար արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձի կողմից ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված ավելացված արժեքի հարկով հարկման բազայի 0,8 %-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

08.08.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ